**Գիտական խորհրդի նիստ 19.12.2016թ.**

1. Համալսարանի 2016թ. գործունեության հաշվետվություն (զեկ.՝ Գ.Շ. Գալստյան)։
2. Համալսարանում 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության ուսման վարձաչափերը հաստատելու մասին (զեկ.՝ Գ.Շ. Գալստյան)։
3. Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ներքին իրավական ակտերի քննարկման և հաստատման մասին (զեկ.՝ Գ.Շ. Գալստյան)։
4. Ատենախոսական թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին (զեկ.՝ Յու.Ա. Սաֆարյան)։
5. Ընթացիկ հարցեր։

*Օրակարգայինհարցերի վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝*

1. Համալսարանի իրավական կարգավիճակի փոփոխմամբ պայմանավորված (ԵՃՇՊՀ ՊՈԱԿ-ըդարձել է ՃՇՀԱՀ հիմնադրամ), ինչես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ ՀՀ ԿԳ նախարարության որոշումները ընդգրկելու անհրաժեշտությունից ելնելով խմբագրվում են համալսարանի ներքին կյանքը համակարգող իրավական ակտերը։ Այս նիստում նոր խմբագրությամբ հաստատվեցին՝ «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի աշխատողների ներքին կարգապահության կանոնները, «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի գործավարության մասին կարգը, «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոնի կանոնակարգը,հոգաբարձուների խորհրդում հաստատելու համար երաշխավորվեց «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի միջին մասնագիտական կրթության քոլեջի կանոնակարգը, առաջին ընթերցմամբ ընդունվեց և համալսարնի ֆակուլտետների ու ամբիոնների քննարկմանը ներկայացվեց «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի տարվա լավագույն ուսանող ամենամյա մրցանակաբաշխության կանոնակարգը։
2. Ներկայացվեց համալսարանի 2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները։
3. Հաստատվեցին Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի մասնագիտությունների 2015-2016 ուստարվա աշխատանքային ուսումնական պլանները։
4. Համալսարանի գիտխորհրդի որոշմամբ փակ գաղտնի քվեարկությամբ 6 դասախոսի շնորհվեցին դոցենտի, 4-ին՝ պրոֆեսորի գիտական կոչումներ։

5. Հաստատվեց թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավարը: